Կէրէտէ, Զաղակօլի, Պօլի, Տուզճէ, Խանտէկ, Ղաթըրչիքօյ, Սապանճի, Իզնիմիտ, Հէրէքէ տէկրմէնի, Կէկպիզէ, Փենտիկ, Ղարթալ, Ուսկուտար (Դեկտ. 14), ուր կ'ինչևանի Երուսաղէմայ տներն։ Դեկտ. 22ին կ'անցնի Կ. Պոլիս ու հանդէսով կը մտնէ Ս. Աստուածածնի եկեղեցին (Թղ. 139բ – 141ա)։

1690 Դեկտ. 22էն **1692** Մարտ 3 կը սպասէ Կ. Պոլիս։ Այդ ժամանակամիջոցին կ'երթայ Պրուսա (**1691** Յուլիս 31 – Օգոստ. 17) և Թէքիրտաղ (Սեպտ. 11 – 22)։ Կ. Պոլիս դանուած միջոցին կը զբաղի Երուսաղէմի գործերով և իր պատրիարքութիւնը պետութենէն վաւերացնելու աշխատանքով (Թղ. 141ա – 156ա)։

1692 Մարտ 3ին նաւով կը մեկնի Կ. Պոլսէն. կը հանդիպի՝ Թէքիրտաղ, Կէլիպօլու, Պօղազհիսար, Պօհչա ատայ, Ղօյինատասիք, Սախըզոյ իլիման, Ըստանքօյու, Ռատօս, Ատալիոյ պուռուն, Կիպրոս (Պաֆ – Աղպուռուն – Լիմիսոն), Տուզլա, Սայտա, Սուր, Աքայ, Հայֆա և Ապրիլ 9ին Եաֆա և 15ին կը հասնի Երուսաղէմ ու հանդէսով կը մտնէ Ս. Յակոբ (Թղ. 156ա-157բ)։

1692 Ապրիլ 15էն **1695** Ապրիլ 4 Երուսաղէմ՝ իբրև պատրիարք (157բ – 194ա)։

Ապրիլ 4ին կը մեկնի Երուսաղէմէն երթալու համար Էջմիածին՝ ցամաքի ճամբով. կը հանդիպի՝ Զէչմէլի, Նապլուս, Կարմեղոս, Ձիւնին, Թաբորի ստորոտը, Նազարէթ, դարձ ի Թաբոր, Յովսէփայ հոր, Ղօնէյդռայ, Սասայ բերդ, Շամ ուր կ'ինչևանի Երուսաղէմի հոգեւորները (Ապրիլ 12էն 19)։ Կը շարունակէ ուղևորութիւնը հանդիպելով Ղուսէյր, Ղտէյֆա, Նէպք, Ղրալար, Իքիղափուլի, Համա, Շէխուն, Մառա, Սարեաղուպ, Խանթումա և Ապրիլ 30ին կը հասնի Հալէպ ու հոն կը մնայ մինչև Օգոստ. 12 (Թ. 194ա – 196բ)։

Օգոստ. 12ին կը մեկնի Հալէպէն. կը հանդիպի Հէյլան, Ախթուման, Ահուտ, Տաշլիպխան, Միզռա, Պէրէճուկ, Պուկուրտլան, Եալաղ, Միլին, Ասլանլի, Սեւերակ, Զումէն, Հապռման, Շեխսառըմ և Օգոստ. 24ին կը հասնի Ընքուշի վանքը ուր կը մնայ մինչև Օգոստ. 31։ Նոյն օրը կը շարունակէ ճամբան՝ Ատիշ, Սպիտակ լեռ, Մալնախարապա, Ս. Աստուածածնի վանք (Արղնուոյ) (Սեպտ. 10 – 20), Թառմալ, Տէվէկէչիտ, Ալիփինար և Սեպտ. 23ին կը հասնի Համիթ, ուր կը մնայ մինչև Նոյեմ. 5 (Թղ. 196բ – 198ա)։

Նոյեմբեր 5ին կը դառնայ Ընքուշի վանքը՝ Ալիփինար